Education USA Հայաստանը Ամերիկյան խորհուրդների, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության հետ համատեղ մեկնարկել է «We Share»հանդիպումների շարք, որի շրջանակում ԱՄՆ կառավարության տարբեր ծրագրերի շրջանավարտներ կիսում են իրենց գիտելիքներն ու ամերիկյան փորձառությունը ընտրված թեմայով հետաքրքրված անձանց հետ:

Մայիսի 17-ին Education USA-ը հանդիպում կանցկացնի ՀՖԿՍՊԻ-ի ուսանողների համար: Աշխատաժողովի բանախոսն է ԱՄՆ Պետդեպարտամենտի կողմից ֆինանսավորվող Global Sports մենթորական ծրագրի շրջանավարտ Նաիրա Աբրահամյանը: Ն. Աբրահամյանը կներկայացնի ծրագրի նպատակներն ու առավելությունները, որոնք միտված են կանանց և աղջիկներին զորակցության մարզական նախաձեռնությունների իրականացմանը: Կքննարկվեն նաև կանանց սպորտի զարգացման հնարավորությունները, կմանրամասնվեն մարզական միջոցառումների բարեհաջող կառավարման սկզբունքները:

Հանդիպումը տեղի կունենա ժամը 13^{00}-ին, 82 լսարանում: